

**Չարց** Ինչպիսի՞ պայմանների դեպքում է մատակարարը սկսում կազմակերպությունների գազամատակարարումը:

**Պատասխան** Մատակարարը կազմակերպությունների գազամատակարարումն սկսում է հետևյալ պայմանների ապահովման դեպքում.

ա) գազասպառման համակարգը փորձարկվել և ստուգվել է, կազմվել են շահագործման ընդունման ակտը և գործարկման եզրակացությունը,

բ) կատարվել են միացման պայմանագրի բոլոր պայմանները,

գ) կազմակերպությունն ունի սպասարկող անձի հետ կնքված գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման պայմանագիր կամ համաձայնագիր մատակարարի հետ, կամ գազասպառման համակարգը շահագործող և սպասարկող մասնագիտացված անձնակազմ, ինչպես նաև կազմակերպության ստանդարտներ՝ անվտանգ շահագործման վերաբերյալ,

դ) մատակարարը կազմակերպության հետ կնքել է Պայմանագիր: